ձեռագրերը մեկընդմիշտ ոչնչացված են, ուստի և բերում ենք դրանց նկարագրությունները աննշան հապավումներով ու շտկումներով։ Ահա այդ ձեռագրերը.

3. [Ժողովածու]— Յոհաննու Իմաստասիրի Սակս ժամու գիշերայնոյ։ Ստ. Սիւնեցւոյ Վասն աղօթից։ Խոսրովայ Անձևացւոյ Մեկնութիւն Ժամագրոց։ Յոհաննու Իմաստասիրի Վասն առաւօտեան երգոյ։ Յովհ. Արճիշեցւոյ Մեկնութիւն պատարագի։

11. Եփրեմի Ասորւոյ Ներբողք ի տնօրինութիւնս Քրիստոսի։

12. Բժշկարան հարուստ։

13. Վարդապետութիւնք և քարոզք յանյայտ հեղինակէ։

18. [Ժողովածու]— Դաւթի փիլիսոփայի Վասն սահմանաց։ Քանի՞ են հերձուածք։ Յովհ. Որոտնեցւոյ «Հայեցարուք ընդ առաքեալն...», «Մարդով եղև մահ...»։ Ոսկեփորիկ։ Վահրամայ Բաբունւոյ Յաղագս սրբոյ երրորդութեան։ Գր. Տաթևացւոյ Դաւանութիւն ԺԴ աստիճանաւ։

20. Առ. Սիւնեցւոյ Ադամգիրք։

21. Գր. Տաթևացւոյ Քաղուածք Աւետարանի Մատթէոսի և Քարոզք։

22. Յիսուն և ինն խնդիրք ի մարդեղութիւն Քրիստոսի։

24. Ներսիսի Մեկնութիւն Առակացն Սողոմոնի։

25. [Ժողովածու]—Առ. Սիւնեցւոյ դաստիարակութիւն վասն նորընծայից։ Մաշտոց։

27. Յոհաննիսի Մեկնութիւն Սողոմոնի։

30. [Ժողովածու]—Վարդապետական գրուածք ի վերայ ինչ-ինչ տեղեաց Աստուածաշունչ գրոց։ Թուղթք և Կանոնք սրբոցն Կիւրղի, Աթանասի և այլոց։

33. [Ժողովածու]—Աղօթք։ Գր. Վանեցւոյ, մականուանեալ Զարաղութիւն, Մաղթանք։ Բարսղի Կեսարացւոյ Քարոզ՝ «Լուարուք որդեակք իմ...», Կանոն ոտնալուային։ Ժամամուտք։ Յովհ. Մանդակունւոյ Աղօթք ի մի պահսն։

35. Հայելի վարուց, յորում 71 պատմութիւնք։

36. Գանձարան հարուստ։

40. Վարք և քարոզութիւն Եւագրեայ։

42. Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու հրամանաւ Զաքարիայ արքեպս-ի Թադէոսի Առաքելոյն, թարգմանեալ աշխատութեամբ [Պետրոսի] Արագոնացւոյ։

47. Գլխակարգութիւն և քաղուածք Թղթոցն Պօղոսի։

52. Քաղուածք Աւետարանի։

59. [Ժողովածու]—Պատմութիւնք Կիւրղի։ Յակոբայ վրդ-ի Տոմարագրութիւն։ Հակաճառութիւն ուղղափառաց առ ժողովն երկաբնակաց։

60. Ներս. Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց։

63. [Ժողովածու]—Համառօտ հաւաքում հոգւոյ և զօրութեանց նորա։ Յաղագս բնութեան հրեշտակաց։ Ի Սահմանաց Դաւթի և այլոց իմաստասիրութիւնք։ Բարդ. Մարաղացւոյ Տրամաբանութիւն։ Յովհ. Որոտնեցւոյ Քարոզք։ Իշաւխ քահանայի Ի վերայ բնութեան։

64. Քարոզք ի վերայ խոստովանութեան, պոռնկութեան, յիշոցատուութեան և կանոնք անծանօթ հեղինակաց։

66. Ընդդիմաբանութիւն ընդդէմ Արիանոսի։